ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՈՒԼԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:**

1) խոչ-նդոտ, որոտ-նդոստ, առ-նթեր, սր-նթաց **(ը)**
2) վար-աբեկել, քողտի-, փա-ցնել, շա-անակ **(կ)**
3) կր-սեր, ճ-քավոր, մթնոլոր-, սփր-նել **(տ)**
4) անե-ք, հանդիպակա-, փայ-աղ, մա-ուցիկ **(ծ)**

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *յու* երկհնչյուն կա:**

1) հ-րասենյակ, հ-սնություն, անընտգ-տ
2) դ-ցազն, աջհամբ-ր, հար-ղյակ
3) մրջ-ն, կապտաթ-ր, ալ-ր
4) ար-նարբու, դ-ղընթեռնելի, ընկ-զ

3 **Ո՞ր շարքում բաղադրյալ հատուկ անվան գրության սխալ *չկա:***

1) Գողթն գավառ, Միկլուխո Մակլայ, Մարիանյան իջվածք
2) Բերմուդյան եռանկյունի, Շրի Լանկա, «Հայկական Ավիաուղիներ» ընկերություն
3) Կարսի թագավորություն, Հայկական լեռնաշխարհ, Վինսենթ Վան Գոգ
4) Իսրայելի Պետություն, Սարգիս Պիծակ, Մաղաքիա Մարգարե

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) ճարպկություն, չվացուցակ, մարմնամարզուհի
2) տարկետում, ծննդատուն, գրագետ
3) փոթորկահույզ, կղզեբնակ, նստակյաց
4) կավճափոշի, վրձնահարված, ընչացք

5 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) ՇԿԶ-756
2) ՄՂԵ-294
3) ՑՉԻԳ-6723
4) ՔՅԽԹ-9339

6 **Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

1) ***գորդյան հանգույցը կտրել***–ենթարկել դաժան դատաստանի
2) ***բոլոր կամուրջներն այրել*** –հետդարձի ճանապարհ չթողնել
3) ***Ռուբիկոնն անցնել*** –վճռական քայլ կատարել
4) ***խարիսխ գցել***–ժամանակավոր բնակություն հաստատել

7 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* արմատին (արմատներից մեկին) *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ***-ու*** -բնակվարձ, առաստաղ, այցելություն
2) ***-մունք*** -համտեսել, ավարատենչ, անասնակեր
3) ***-անի*** - տեսակավորել, վարչապետ, գեղջուկ
4) ***-ային*** -գիտխորհուրդ, նրբաջիղ, դիրքավորում

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:**

1) վարքագիր, հրակայուն, հանքաքար, խորհրդատու
2) վաթսունհինգ, հուշարձան, աներկբա, թանկարժեք
3) սրտմտանք, չարաղետ, դարակազմիկ, գույքահարկ
4) հերթագայություն, կայանատեղ, բանտարկյալ, խորաքնին

9 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1) Ցոլակը նրա ձին էր՝ կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ:
2) Այդ ճանապարհը, թեև քաղաքի փեշով է անցնում, բայց չի տարբերվում գյուղի մյուս ճանապարհներից:
3) Իմ հիշողության մթագնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատկեր. դժվարությամբ եմ ճանաչում դիրքը, կապակցում մարդուն ու շրջապատը:
4) Կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչկոտող եղնիկի վճիտ հայացքի արտապատկերն է դա:

10 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն բառերի համարները, որոնց բոլոր բաղադրիչների քանակները ճիշտ են տրված:**

1. թանձրամտորեն = 2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
2. պատվարժան =2 արմատ, 2 ածանց, 1 հոդակապ
3. արձակագիր =2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
4. կուսակցական = 2 արմատ, 1 ածանց, 1 հոդակապ
5. տնտեսվարություն = 3 արմատ, 1 ածանց
6. վերնախավ =2 արմատ, 1 հոդակապ

1) 1, 2, 3, 5
2) 2, 4, 5, 6
3) 2, 3, 4
4) 1, 4, 5

11 **Ո՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ *չկա:***

1) Մարիամը եկավ, բեռը շալակին՝ դեմ ընկավ ծառին ու ճոճվեց, ուզեց գերանին հենվել:
2) Գալով խոհանոց՝ Մեսրոպը մետաղե պահարանից հանեց պետերի համար միայն գործածելի փոքր չափսի պղնձամանը, ընտրեց իր ուզած միսը և սկսեց ճաշ պատրաստել:
3) Ալխոյին թվաց, թե ինքը ձորից զառիվերով բարձրացել է և ահա գնում է իրենց դուռը:
4) Ալխոն մենակ արտ չի մտնում, որովհետև միթևանի հանդապահը գոռգոռում է, իրեն օրերով փակում են ցեխոտ գոմում:

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են մակբայներ:**

1) անմիջապես, բացեիբաց, եռյակ
2) հազիվհազ, այնպես, օրեցօր
3) մոտակա, մշտապես, հիմնովին
4) նորից, խստիվ, դիտմամբ

13 **Ո՞ր նախադասության մեջ ներկա ժամանակի բայաձև *չկա:***

1) Արևի հրափայլ սկավառակը որպես մի բոցավառ անոթ սկսեց բարձրանալ երկնակամարի վրա:
2) Այդ մարդը Արարատ լեռան գագաթը տեսնելուն պես ուրախության նշաններ է ցույց տալիս:
3) Նա գիտի, որ ինքը բարձրանալու է այն լեռան գլուխը և տեսնելու է իր ցնորքի աշխարհը:
4) Իմ երգերի ձայնից, իմ երգերի Էլ չեն զարթնում քնած երգերը քո:

14 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց հոգնակին կազմվում է -*ներ* վերջավորությամբ:**

1. խորագիր, 2. սպա, 3. ոտնաձայն, 4. հարթաչափ, 5. ծովախույզ, 6. հեռախոս, 7. դեղատուն, 8. տոնածառ, 9. հրաբուխ

1) 2, 4, 5, 6, 9
2) 1, 4, 5, 7, 9
3) 2, 3, 4, 7, 8
4) 1, 2, 3, 7, 8

15 **Ո՞ր նախադասության մեջ հարաբերական դերանուն կա:**

1) Ես ինչպես կարող եմ անընդհատ հուսալ, որ կփոխվես, ճիշտ վարքով կապրես:
2) Պետք էր Կամսարյանի տեղը լինել՝ հասկանալու համար, թե ինչպիսի տանջանքի ու նահատակության ժամեր էին դրանք:
3) Ոչ ոք չի ասում այն, ինչ մտածում է, բայց ամեն ոք խոսում է ազնվությունից:
4) Տեսնենք՝ ջրերն ինչ են բերում, Տեսնենք՝ ինչ է անում քամին, Եվ ամփոփենք ամբողջ օրվա Առաքածը:

16 **Ո՞ր նախադասության մեջ կոչական *չկա:***

1) Եվ մի՞թե այդ վշտիդ համար Չեմ սիրում քեզ այդպես քնքուշ Եվ խոնարհվում քեզ պես համառ, Օ՜, հայրենի՛ք՝ դառն ու անուշ:
2) Աշխարհին, այո՛, մաքրություն է պետք:
3) Լա՛ց վերջին լացդ, սի՛րտ իմ մենավոր:
4) Եթե չեք իջել թեկուզ մի ժամ, Խաղաղ չեք ննջել թեկուզ մի ժամ Իշխանասարիս վրաններում, Չվո՛ղ թռչուններ, ձեզ չեմ ներում:

17 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ցմեռը նստում էր բուխարու մոտ և չոր փայտը դարսելով կողքին փայտերը մեկ-մեկ գցում էր կրակի մեջ պատմություններ անելով շահի ժամանակից:
2) Նրանց անտառների ողողանջներն ասես անդորրություն են սփռում հուռթի դաշտերի վրա և խառնվում սարերի մշուշին:
3) Նա կանխազգում էր իրեն արդեն հարազատ դարձած այդ մարդուն տեսնելու անհնարինությունը և սիրտը ցավում էր կորստի գիտակցությունից:
4) Բարձրացավ արևը և բարի ժպտաց աշխարհին իր ոսկեզօծ շողերով ողողելով կիրճի արևահայաց լանջերը:

18 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Մեծահամբավ գլամարտիկի տապալվելուն պես կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:*
   Մեծահամբավ գլաամարտիկը տապալվի թե չէ, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
2) *Թռուցիկը պատմում էր ղեկավարներից մեկի՝ Թիֆլիսում ինքնասպան լինելու մասին:*
   Թռուցիկը պատմում էր այն մասին, որ ղեկավարներից մեկը Թիֆլիսում ինքնասպան է եղել:
3) *Որքա՜ն լավ է մարդկանց՝ քեզ վստահելը:*
   Որքա՜ն լավ է, երբ մարդիկ քեզ վստահում են:
4) *Ոչ միայն դրսում, այլև տանը տեսածս իմ մանկական տվայտանքների աղբյուրն էր:*
   Իմ մանկական տվայտանքների աղբյուրն այն էր, ինչ որ տեսնում էի ոչ միայն դրսում, այլև տանը:

19 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Երբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախագահը քվեարկության դրեց նոր գյուղատեղ փոխադրվելու հարցը, ճրագի թույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի հետևում մի պահ չերևացին փափախները. ……

1) որովհետև ճրագը թարթում էր լույսի հետ և տաքություն տալիս:
2) թվաց, թե հսկա մի մարմին բյուր ձեռքեր է պարզել դեպի սևացած առաստաղը:
3) մինչդեռ ճրագի հետ վաղվա հույսը ջերմություն էր սփռել սրահում:
4) որոնք ուրախ աղմուկով դուրս եկան:

20 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Մի՞թե կրոնական որևէ հույզ, հոգածության որևէ նշույլ չկա այդ վերաբերմունքի մեջ, որ շռայլվում է սիրած էակի նկատմամբ, որը դեռ չի կարող այն գնահատել:
2) Այդ նշանավոր տարվա հոկտեմբեր ամսվա վերջին Պալե-Ռոյալ մտավ մի երիտասարդ ճիշտ այն րոպեին, երբ խաղատները բացվում էին՝ համաձայն այն օրենքի, որ պաշտպանում է անխուսափելի դարձած կիրքը:
3) Այդ միջոցին, երբ դուք մտնում եք խաղատուն, օրենքը նախ և առաջ ձեզնից խլում է ձեր գլխարկը, որպեսզի դուք հարգալից կեցվածք ընդունեք նրանց առջև, ովքեր խաղի մեջ խլելու են ձեր գումարը:
4) Օրիորդը մի քանի անգամ բարձրացրել էր վարագույրները՝ ժայռերից վերև ելնող ծխի մի սյուն տեսնելու, բայց թվում էր, թե մառախուղը րոպե առ րոպե նոր երանգներ է ստանում, որոնց մեջ նրա երևակայությունը վատ նախագուշակումներ նշմարեց:

21 **Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասությունը ժամանակի պարագա:**

1) Ամեն առավոտ, երբ բոլորս դեռ քնած էինք լինում, պապս ոտքի վրա էր:
2) Տղաները գյուղ վերադարձան այն գիշերը, երբ իրենց ուտելիքի պաշարը վերջացել էր:
3) Կային ժամանակներ, երբ հայ ժողովուրդը պայքարում էր հանուն մի պատառիկ հողի:
4) Գետը հասնում է քարե այդ մաղին թե չէ, կորչում է:

22 **Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞ւմ սխալ *չկա:***

1) *- Քո գործն է,- ասաց տղան փոքրիկ երեխային,- ուտում ես՝ կե՛ր, բայց հետո չասես, թե փորդ ցավում է:*
   Տղան փոքրիկ երեխային ասաց, որ նրա գործն է, ուտում է՝ թող ուտի, բայց հետո թող չասի, թե փորս ցավում է:
2) *- Զատիկ եմ ուզում,- լացակումած ասաց երեխան եղբորը,- խնդրում եմ, ինձ համար մի զատիկ գտի՛ր:*
   Երեխան լացակումած ասաց, որ զատիկ է ուզում, և խնդրեց եղբորը, որ իր համար մի զատիկ գտնի:
3) *- Քեզ ձի կնստեցնեմ, ես ու դու ձիով կգնանք կայարան, հայրիկին կայարանից կբերենք,- ասաց մեծ եղբայրը:*
   Մեծ եղբայրն ասաց, որ նրան ձի կնստեցնի, իրենք ձիով կգնան կայարան, հայրիկին կայարանից կբերեն:
4) *- Դրանք ձմեռվա համար չե՞ն,- նայելով իրեն մեկնված կոշիկներին՝ զարմացած հարցրեց տղան:*
   Նայելով իրեն մեկնված կոշիկներին՝ տղան զարմացած հարցրեց, թե դրանք արդյոք ձմեռվա համար չեն:

23 **Գործառական ո՞ր ոճով է շարադրված տրված հատվածը:**

Մեր հրետանին կանգնել էր Մեծամոր բլրի տակ, և նրան չէին օգնում ո՛չ հին մագաղաթները, ո՛չ հիքսոսները, ո՛չ էլ Երկիրը գնդած գիտնականները: Եվ աղերսում էին գեթ Արարատյան հանրապետություն, հովտի գոնե կեսը: Ամբողջ օրը մեր հրետանին քանդուքարափ էր անում մեր Սարդարապատը, ապա տղերքը լծվեցին և եզան պես առանց ձայնի արտասվելով՝ թնդանոթները թիզ առ թիզ քաշեցին Արագածն ի վեր՝ Ապարան: Հետո թշնամին գովել էր, թե այդ հայերը կարծես թե տղամարդ են. կռվում են:

1) գիտական
2) պաշտոնական
3) առօրյա-խոսակցական
4) գեղարվեստական

24 **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

…Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի՛–
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի…

1) «Վահագն»
2) «Դանթեական առասպել»
3) «Անվերնագիր»
4) «Մահվան տեսիլ»

25 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Բայց դեռ երկար ճանապարհ կար անցնելու կաուչուկի և ծծմբափոշու խառնուրդից ջերմության ու ցրտի նկատմամբ չեզոք նյութ ստանալու համար, որպեսզի կաշվե կոշիկների համեմատ կաուչուկե ոտնամանները առավելություն ունենային:
2. Պերուի հնդկացիներն այդ զանգվածից երկարաճիտ կոշիկների նմանվող բաներ էին ծեփում և հագնում անձրևների ժամանակ:
3. Արտաքուստ ոչնչով աչքի չընկնող ծառ է Հարավային Ամերիկայի արևադարձային անտառներում աճող հևեան, որի կեղևի կտրվածքներից թանձր խեժ է հոսում:
4. Երկար ժամանակ միայն կաշվե կոշիկներ հագնող և մշտապես անձրևներից նեղվող եվրոպացիները, առաջին անգամ հայտնվելով Պերուում, իրենց հետ տուն տարան հևեայի պնդացած հյութը՝ տեղացիների ասած կաուչուկը, որին տրվեց նոր անուն՝«գումինաստիկ»:

1) 4, 3, 1, 2
2) 3, 1, 4, 2
3) 4, 2, 1, 3
4) 3, 2, 4, 1

26 **Գ. Զոհրապի ո՞ր հերոսի մասին է տրված խոսքը.**

«Կը բավեր, որ իր ճարտարության փորձը տար ամենեն անմատչելի կարծված տունները կողոպտելով, ու հոժարությամբ ետ պիտի տար գողոնը, թե որ բռնվելու վախը չըլլար»:

1) Մարտիրոսի
2) Զաբուղոնի
3) Հուսեփի
4) Սահակի

27 **Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի սյուժեի վերաբերյալ մտքերից որո՞ւմ սխալ կա:**

1) Կռվի դաշտում Շահին խորհուրդ են տալիս, որ փորձի տիրել Թմկա տիրուհու սրտին, և այդ դեպքում Թաթուլը անզոր կլինի նրա առաջ:
2) Թմկա տիրուհին հարբեցնում է Թաթուլին և նրա հաղթական զորքին ու թշնամու առաջ բացում բերդի դռները:
3) Շահի ուղարկած պատվիրակները մեծամեծ ընծաներով կարողանում են համոզել Թմկա տիրուհուն դառնալ Շահի կինը:
4) Նադիր Շահը բազմիցս փորձել էր գրավել Թմկաբերդը, բայց կռիվը միշտ ավարտվել էր Թաթուլի հաղթանակով:

28 **Ո՞ր տողով է ավարտվում Մ. Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը:**

1) Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
2) Ի՜նչ հեշտին է մըթնշաղն այս սատափե
3) Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե
4) Նըվագն անոր կը հեծեծե հեշտական

29 **Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ միայն ինձ թվաց»:

1) «Սպիտակ ձին»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

30 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող ……ելաներ:

1) լո՜ւյս
2) սի՜րտս
3) բո՜ց
4) ո՜ղբ

31 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում նշվածներից ո՞վ է հրաժարվում մասնակցել Հազկերտի հրովարտակի պատասխան նամակի համար Արտաշատի վանքում հայ աշխարհիկ և հոգևոր այրերի ժողովին:**

1) Վասակ Սյունին
2) Վարդան Մամիկոնյանը
3) Մովսես Խորենացին
4) Սրվանձտյա Գարեգինը

32 **«Սասնա ծռեր» էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ւմ գերեզմանին է Բաղդադում այցելում Փոքր Միհրը:**

1) Բաղդասարի
2) Քեռի Թորոսի
3) Ջենով Հովանի
4) Գագիկ թագավորի

33 **Ո՞ր նախադասություններում միջոցի անուղղակի խնդիր կա:**

1. Ես եկել եմ այն վերջնական եզրակացությանը, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:
2. Բոլոր երկրներում մարդիկ սիրով են դիմավորում Նոր տարվա գալուստը:
3. Մշո դաշտը պատված էր թանձր մառախուղով:
4. Թուխ, փարթամ մազերով բարձրահասակ մի տղամարդ էր Լևոնը:
5. Ճապոնացիները հնուց ի վեր իրենց բոլոր տոները դիմավորում են մեծ շուքով:
6. Չինացիները տոնական սեղանը զարդարում են կարճ կտրած նարգիզներով:

34 **Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:**

1. միջնակարգ, 2. թռչուն, 3. աշխուժանալ, 4. ատենադպիր, 5. մարդկայնորեն, 6. հավիտենական, 7. սննդարար, 8. արնանման

35 **Ո՞ր բառերն են հոդակապով:**

1. բարեգութ, 2. անարգանք, 3. շնորհակալ, 4. ուղեկցորդ, 5. վրիժառու, 6. ձայներիզ, 7. փառամոլ, 8. հպատակ

36 **Նախադասության մեջ գործածված բառերից որո՞նց ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:**

Մարգարիտան դադարել էր տեսնել, թե ինչ է կատարվում դռնապանի սենյակի խորքում, բայց իրեն հասնող աղմուկը ոչ մի լավ բանի մասին չէր խոսում:

1. **մասին** – կապ, հետադրություն
2. **դադարել** – վաղակատար ձևաբայ
3. **խորքում** – գոյական, ներգոյական հոլով
4. **իրեն** – անձնական դերանուն, սեռական հոլով
5. **տեսնել** – կանոնավոր բայ, սոսկածանցավոր
6. **հասնող** – ենթակայական դերբայ, ներգործական սեռ

37 **Ո՞ր նախադասություններում ընդգծվածը շաղկապ *չէ* (նախադասությունները կետադրված չեն):**

1. <u>Հենց</u> ինձ էիր ուզում բոլորի առաջ նկատողության արժանացնել:
2. Այսօր ժամանակ չենք ծախսելու խնդրի լուծման <u>այլ</u> տարբերակների քննարկման վրա:
3. <u>Մինչ</u> սողունը փախչում էր երիտասարդից վերջինս հետապնդում էր նրան:
4. <u>Նախքան</u> պատանու հարցին պատասխանելը նա ուղեպայուսակից հանեց զանազան ուտեստներ:
5. <u>Քանի դեռ</u> ճրագը վառվում էր երրորդ մարդը աչքերը լաթով կապած նստած էր սենյակում:

38 **Ո՞ր նախադասություններում կետադրական որևէ նշան պիտի դրվի:**

1. Երկրագնդի վրա ապրող մեծաթիվ թե փոքրաթիվ բոլոր ժողովուրդների թիվը հասնում է մոտ երկու հազարի:
2. Հզոր աստղադիտակները գիտնականներին տիեզերքի խորքը թափանցելու և երկնային մարմինների ճառագայթումը ուսումնասիրելու հնարավորություն են տալիս:
3. Գառնու տաճարի կողքին պահպանվել է բաղնիքի տասնհինգ գույնի բնական քարերից պատրաստված խճանկարով հատակը:
4. 1242 թվականի ապրիլի հինգին Չուդ լճի սառույցների վրա տեղի ունեցավ պատմության անիվը շրջող ճակատամարտ:
5. Քանի դեռ այդ երամակում այդ նարնջագույն հովատակն էր ուրիշ ձի սիրտ չէր անի երևալ երամակի մոտերքը:

39 **Տրված բառաշարքում քանի՞սն են *ուտել* բառի բառաձևեր:**

ուտելի, կերել եմ, ուտող, քչակեր, կերե՛ք, կերած, կուտենք, կերակուր

40 **Տրված բառերից քանիսո՞ւմ է գաղտնավանկի *ը*-ն սխալ տեղադրված (տվյալ տեղում գաղտնավանկ *չկա*):**

ձեռն(ը)տու, շր(ը)խկոց, ճխ(ը)լվել, գտ(ը)նվել, լուս(ը)նկա, զն(ը)նել, հագն(ը)վել

41 **Բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից:**

զանազանել-տարբերել, բաղդատել-բաժանել, կատակաբան-զվարճախոս, թեզանիք-մանյակ, ընչաքաղց-ագահ, ընձյուղել-ծլարձակել, աղիողորմ-դառնահամ, շողոքորթ-շաղակրատ

42 **Ընդգծվածներից քանի՞սն են բայական անդամի լրացում:**

Նոր <u>միջավայրը</u> թեև ձանձրալի, բայց հետաքրքիր էր ինձ համար: Օրը յոթ ժամ արտագրելով իմ իշխանավորների ստեղծագործությունները՝ <u>բնավ</u> չէի մտածում, որ իմ միտքն ու զգացումները <u>օր օրի</u> բթանում են: Ես մի անծանոթ մեքենայի չնչին մասնիկներից մեկն էի: <u>Ինչ</u> էր անում այդ <u>մեքենան</u>՝ բոլորովին չէի հետաքրքրվում: Ինձ համար անհասկանալի, նույնիսկ ծիծաղելի էր այն լրջությունը, որով իմ պաշտոնակիցները իրենց <u>գործն</u> էին կատարում՝ մտազբաղ դեմքերով վազվզելով <u>մի սեղանից մյուսը</u>:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ պատճառի պարագա կա:**

- Ինչո՞ւ չես խոսում, ինչո՞ւ չես նայում, Դու իմ գերեզմանն ինչո՞ւ ես խլում:
- Ասում են, թե էն Փարվանա Ջահիլներն են սիրավառ, Շտապելուց թև են առել, Դարձել թեթև թիթեռներ:
- Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, Թե չլինեն կինն ու գինին:
- Էսպես տիկինը տվեց պատասխան. Անհուն ցասումից մռնչաց Շահը:
- Ջուրն ընկանք, կրակն ընկանք, Չմեռանք, բայց և չամրացանք, Խլացանք շատ լսելուց Եվ շատ լռելուց համրացանք:

44 **Պնդումներից քանի՞սն են սխալ:**

- Արևմտահայերենում թե՛ անձնանիշ, թե՛ իրանիշ գոյականներով արտահայտված ուղիղ խնդիրը դրվում է բառի ուղիղ ձևով:
- Գրական արևելահայերենը ձևավորվել է Արարատյան բարբառի հիմքի վրա:
- Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում ժխտական դերանունով արտահայտված ենթակայի ստորոգյալը ձևավորվում է դրական խոնարհման բայով:
- Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը լույս տեսնելուց հետո գրաբարը վերջնականապես դադարում է գործածվելուց:
- Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու է:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ածանցավոր բառերն ունենում են միայն մեկ արմատ և միայն մեկ ածանց:
2. Բառը կոչվում է բարդ, եթե ունի մեկից ավելի արմատ և ոչ մի ածանց:
3. Ածանցավոր բառի կազմում չի կարող լինել անկախ գործածություն չունեցող արմատ:
4. Վերջածանցները միշտ լինում են բառի վերջում:
5. Ի տարբերություն վերջածանցների՝ վերջավորություններով նոր բառ չի կազմվում:
6. Բառը չի կարող սկսվել իրար հաջորդող երկու նախածանցներով:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Աստիճանաբար մոռանալով խառնիճաղան-(1) առօր-ական(2) հոգսերը և կտրվելով սրտմաշու-(3) ու տա-տկալի(4) մտքերից՝ Երեմ-ն(5) խաղաղ քուն մտավ: Մայրը նայեց որդուն, որ բար-(6) արևի տակ երկար մնալուց խա-շիկի(7) էր նմանվել, զգույշ վերցրեց մա-մարյա(8) ե-ռտանու(9) վրա դրված լաջվար-(10) վերնաշապիկը և դուրս գնաց:

1) 1-ջ, 3-կ, 6-կ, 10-դ
2) 2-ե, 4-խ, 7-փ, 8-ր
3) 2-ե, 5-յա, 6-կ, 10-դ
4) 1-ջ, 4-խ, 7-փ, 9-ռ

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) մեջք(մեջքի), ի(սպառ), մեկ(հինգերորդ), դուրս(բերել)
2) զառ(ի)վայր, ալ(կարմիր), տնից(տուն), ըստ(ամենայնի)
3) հարյուր(մեկ), առ(հասարակ), մեծ(մասամբ), ուր(որ)է
4) ի(լրումն), առ(այն), սրբություն(սրբոց), դեմ(հանդիման)

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) մտամոլոր, զբոսայգի, թիկնաթոռ
2) տարեմուտ, ընձուղտ, մանկական
3) խնկաբույր, դիպակազարդ, նստակյաց
4) գինետուն, սանրվածք, ծանրաձող

49 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) ***քիմք*** – բերանի խոռոչի կամարաձև առաստաղ, ***հակամետ*** – մի բանի տրամադիր
2) ***դրասանգ*** – ծաղիկներից պատրաստված հյուսակ, ***առդոսկել*** – մեկի դեմ դավեր լարել
3) ***դեղձան*** – բաց դեղնագույն, խարտյաշ, ***երախտիք*** – ուրիշին արված բարի գործ
4) ***թրծել*** – կարծրություն տալու համար այրել, ***մրահոն*** – սև հոնքեր ունեցող

50 **Ո՞ր տարբերակի նախադասություններում են ընդգծվածները համանուններ:**

1) Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև Մի ուրու **անցավ,** մի գունատ աղջիկ՝ ճերմակ շորերով:
«**Անցավ** գլուխդ ցավի տակ մի՛ դիր»,- ասում է ժողովուրդը:
2) **Հրի** լեզուները լափեցին երբեմնի հզոր ու հարուստ քաղաքը:
Եթե **հրի** չմատնեին քաղաքը, գուցե մեծ ավարի տիրանային:
3) Մեղադրյալը, **դողը** սրտում, սպասում էր իր դատավճռին:
Երբ հիվանդի ջերմությունն իջավ, մարմնի **դողն** անցավ:
4) Ետևը **սո՞ւր**, առաջը ջո՞ւր, Սու՛գ, վայնասո՞ւն, իրարանցո՞ւմ:
Սուր վերցնողը սրից էլ կընկնի:

51 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) ամրակուռ-խարխուլ, օրենսդիր-ապօրինի, հերաթափ-թավամազ
2) հանձին-հակառակ, շեն-ավերակ, խորամանկ-դյուրահավատ
3) գեղատեսիլ-անհրապույր, ծանծաղ-խորունկ, կուշտ-անոթի
4) ներհակ-իրարամերժ, արևոտ-թխպամած, գթառատ-դժնի

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ապ-* նախածանց կա:**

1) ապշահար, ապերախտ, ապարանջան
2) ապակատար, ապաքինվել, ապացույց
3) ապերասան, ապակեպատ, ապիկար
4) ապերջանիկ, ապառիկ, ապակառուցում

53 **Ո՞ր նախադասության մեջ ածական *չկա:***

1) Տեղանքը, որն ընտրել էինք հանգստանալու համար, անտառածածկ էր:
2) Մեռած քաղաքի համր փողոցներին իջնելու էր ձյունը՝ մեղմելով ամայության ցավն ու տառապանքը:
3) Կառուցողները բոլոր դամբարաններն էլ փորձել են պահպանել իրենց անաղարտությամբ, բայց միայն այս դամբարանի մուտքն է նրանց հնարամտության շնորհիվ թաքցվել:
4) Արծրունու միհարկանի տնակը շրջապատված էր պարտեզով, որի մի մասը ծաղկանոց էր:

54 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ կա:**

1) Հեռվից դիտողին ծովը թվում էր մարգարտե ցող՝ երեքնուկի թերթիկներով պատած:
2) Երբ նա երաժշտություն էր լսում, թեթևություն էր զգում. կարծես ուսերից ընկնում էր մի ահագին ծանրություն:
3) Նա իր մեջ կրում էր այն ամենը, ինչ ստիպում էր ժամանակի ոգին:
4) Երբ նա ճանապարհվում էր Ռուսաստան, իմ գործերը բազմապատկվում էին, և ես դառնում էի լիակատար կառավարիչ:

55 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) Այս ծանր օրերին գոնե որդին կողքին լիներ:
2) Տխուր երեկոն զարկել է վրան. Սիրտս կարոտով կանչում է քեզ, ե՛կ:
3) Արդյոք ատելուց չէ՞, որ այսքան շատացել են դառնությունները:
4) Թե կռիվը անխուսափ է, Թող չկռվեն երկու երկիր, այլ մարդ ու կին:

56 **Ո՞ր տարբերակում մեկից ավելի ներգործական սեռի բայ կա:**

1) Յուրաքանչյուր տարուբերումից շղթայի ժանգոտված օղակները սուր ճռնչում էին՝ խախտելով շրջապատի անդորրը:
2) Հանկարծ երևաց մի կին, որը քայլում էր դեպի ճոճանակը՝ երեխային գրկած:
3) Խառնվել են գլխում հինն ու նորը, միտքը սառել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է բերում վաղվա օրը:
4) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *կա* հոլովման:**

1) ամառ, տարի, ազգանուն, գիշեր
2) երեկ, ժամանակ, ցերեկ, երբ
3) շաբաթ, վաղը, գարուն, այսօր
4) ամիս, Ամանոր, ժամ, առաջ

58 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Իմ հոգին որպես թափառիկ մի շուն Ահաբե՜կ, անօ՜գ փախչում է հեռուն:
2) Փոքորիկը թեթև տաշեղների նման այս ու այն կողմ էր շպրտում հույների նավերը:
3) Ավին հիմա էլ ողջ է, չնայած սովորական մարմնին գլխի փոխարեն մարդկային գանգ է՝ ամբողջովին կլպված:
4) Կտուրին նստած՝ այնքան խոսեցին, մինչև քունը դարձավ անդիմադրելի:

59 **Ո՞ր նախադասության մեջ միջադաս դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նայում էր փողոցին պատշգամբի բազրիքին կռթնած և հանկարծ նկատեց մոտեցող կառքը:
2) Նրա փոքրիկ գլուխն անզոր ընկել էր կրծքին և թելի վրա կախված տանձի նման օրորվում էր աջ ու ձախ:
3) Կատվի աչքն ընկավ մի սմքած թագավորի վրա որ հասկանալով իր մոտալուտ վախճանը հանկարծ վրայից գցեց պատմուճանը ու նետվեց սանդուղքն ի վար:
4) Նա գրում էր երկար անշտապ մոռացած դեպի լուսաբաց թեքվող խավարի մասին այլևս չլսելով գիշերային ձայների արձագանքը:

60 **Ո՞ր տարբերակում ընդգծվածը նախադասություն *չէ:***

1) <u>**Եվս մի վայրկյան**</u>**,** և արկը հօդս կցնդեցներ ողջ շինությունը:
2) <u>**Տոթ է**</u>**,** և օդ չկա շնչելու:
3) Քայլում ենք մենք փողոցներում, Ես՝ քո սիրով, <u>**դու՝ ուրիշի**</u>:
4) Նա <u>**չգիտես ինչ**</u> է փնտրում այս կյանքում:

61 **Ո՞ր նախադասության մեջ միայն մեկ հատկացուցիչ կա:**

1) Ճանապարհի եզերքին՝ դալար թմբի վրա, կանգնել էին երեք գեղջուկ պատանիներ՝ մախաղները մեջքներին կապած:
2) Ձյան վրայով սահում էր ուղեկցիս գյուղական նախակերտ սահնակը, և ես այն զգացումն ունեի, թե լուսնի «դաշտերի» վրայով է, որ սահում ենք:
3) Ես չունեի ոչ մի նպատակ, ոչ մի երազ՝ բացի տվյալ օրվա պարենս վաստակելուց և հորս պարանոցի վրա մի ավելորդ լուծ չդառնալուց:
4) Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին իր աչքերում, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից հայրենի եզերքը տեսավ:

62 **Ո՞ր նախադասության մեջ ներգործող անուղղակի խնդիր *չկա:***

1) Ժայռերի ստվերոտ կողերը մամուռով էին պատվել:
2) Ահազանգից վայրկյաններ անց շենքը շրջապատվեց ոստիկաններով:
3) Երեխայի ճիշտ դաստիարակությունից շատ բան է կախված:
4) Դու ամենից շատ քննադատվեցիր այդ հարցից չհասկացողներից:

63 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Ես կույր եմ հիմա, անբախտ ու մենակ, Հավերժում կորած մի մոլոր ասուպ:
2) Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝ Ես դուրս եմ գալիս՝ նորից շրջելու:
3) Ա՜խ, նույնն է միշտ քո երգն անծայր, Ինչպես անդարձ մի ճանապարհ:
4) Ես գիտեմ մի թովիչ առասպել, Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում:

64 **Ո՞ր նախադասության մեջ միջակետ *չպիտի* դրվի (տրոհության նշանները դրված չեն):**

1) Մեսրոպ Մաշտոցը հայերեն տառերն ստեղծեց 5-րդ դարի սկզբին Եդեսիայում այդ ժամանակ Հայաստանի թագավորն էր Վռամշապուհը և բերեց Հայաստան:
2) Իրադարձությունները սկսվեցին հետևյալ կերպ Զարուհի անունով օրիորդի մոտ «խռովարարական թղթեր» հայտնաբերեցին ու նրան ձերբակալեցին:
3) Նա որոշել էր թե ինչ ասի տնօրենին երեխաները մեծացել են ընդարձակ բնակարան է պետք թանկարժեք կահկարասի:
4) Մեր տան ներքնահարկը մինչև այժմ ոչնչի չի ծառայել անհարմար նեղ սանդուղքով դժվար էր ներքև իջնելը:

65 **Ո՞ր հեղինակի ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Պատրիկյանը ձեռքով հուսահատական մի շարժում արավ, գլխարկը ոչ թե ծածկեց, այլ ծածկելիս ուղղակի խփեց գլխին և դուրս գնաց»:

1) Նար-Դոսի
2) Մուրացանի
3) Ա. Բակունցի
4) Հ. Մաթևոսյանի

66 **Ի՞նչ նպատակով էր Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր հերոս Աբիսողոմ աղան Տրապիզոնից եկել Պոլիս:**

1) թաղական ընտրվելու
2) ամուսնանալու համար աղջիկ ընտրելու
3) հարազատներին տեսակցելու
4) մայրաքաղաքի մտավորականներին հովանավոր կարգվելու

67 **Ո՞ր նախադասություններում բայի բաղադրյալ ժամանակաձև կա:**

1. Ինքնըստինքյան հասկանալի էր, որ չկարողացա շատ բան անել մարդկանց կատարյալ դարձնելու համար:
2. Զգաց, որ պետք է շտապեր, արագ գործեր, բայց ապարդյուն:
3. Աշխարհում ապրող ամեն մարդ իր նպատակին է ձգտում:
4. Նա ոչ մի անգամ հետ չնայեց ու չտեսավ, թե ինչպես է պանդոկապանը աշխույժ խոսում ու մատով ցույց տալիս իր կողմը:
5. Նա ինձ դուր է գալիս, ու ես կփորձեմ հաճոյանալ նրան:

68 **Ո՞ր մտքերն են հակասում շարադրանքի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Մոտավորապես 30-54 միլիոն տարի առաջ այժմյան Լիբիայի տարածքում ապրում էին մաստոդոնտներ, ծովային կովեր, 50 ոտնաչափ երկարությամբ սողուններ, ներկայիս ռնգեղջյուրի մեծության բորենիներ: Այս խոշոր ու տարօրինակ կենդանիներից վտանգավորը բորենիներն էին, որոնցից, ըստ գիտնականների ենթադրության, պետք է որ սարսափահար փախչելիս լինեին մյուսները:

Հիշյալ կենդանիների կմախքների մնացորդները հայտնաբերվել են նավթ որոնողների կողմից Միջերկրականի ափերից 200 մղոն դեպի հարավ գտնվող վայրում:

Այդ հայտնագործությունից հետո տվյալ շրջան ուղարկվեցին գիտնականներ, որոնցից մեկը՝ Սևիջը, կարողացավ հայտնաբերել բորենու ամբողջական պահպանված հսկայական կմախք, ինչպես նաև հնագույն հսկա փղի՝ 120 սմ երկարությամբ մարգարտավարդագույն ժանիքներ: Որոշ ժամանակ անց Սևիջին պարգևատրեցին իր ուսումնասիրած կենդանիների, դրանցից հատկապես գիշատչի՝ բորենու վտանգավորության չափը: Այդ հսկա բորենու ծնոտը, որքան էլ զարմանալի է, ընդունակ էր 1սմ քառակուսու վրա 20 տոննա ծանրությամբ կծել: Ակնհայտ էր, որ «սարսափելի ժամանակների» ամենատիրական գիշատիչներից մեկը հենց բորենիները պետք է լինեին:

1. Գիտնականները պարզեցին, որ հնագույն կենդանիներից ամենախոշորը եղել են բորենիները:
2. Ծովային կովերի երբեմնի գոյությունը ի հայտ եկավ շնորհիվ նավթ որոնողների:
3. 30-54 միլիոն տարի առաջ ապրած փղերի մաշկը, ի տարբերություն ներկայիս փղերի, վարդագույն երանգ է ունեցել:
4. Սևիջի ենթադրությունը՝ բորենիների վտանգավորության մասին, հիմնված էր դրանց ծնոտի ուսումնասիրության վրա:
5. Ըստ Սևիջի դիտարկման՝ հայտնաբերված բոլոր կմախքները պատկանել են գիշատիչ կենդանիների:

69 **Ո՞ր նախադասություններում գոյականով արտահայտված ենթակա կա:**

1. Կա խորհրդավոր մի հրապուրանք քո շարժումների անխոս զրույցում:
2. Ես ձեր խիղճն եմ, ինձ մի՛ խաբեք, Ձեր թևերն եմ, ինձ մի՛ կապեք:
3. Կուզես պայթի՛ր, կուզես ճչա՛. Մեզ մարդու տեղ դնող չկա:
4. Տեսնես ի՞նչ էին ասում իրար, Երբ լսում էին ղողանջը մեր, Մանուկ արևը սարերն ի վար Եվ մեռնող մութը ձորերն ի վեր:
5. Ինչպե՞ս ապրեմ առանց քեզ, Սիրելի՛ Պարույր. Դու հաց էիր ինձ համար, Օդ էիր ու ջուր:
6. Ո՞վ պիտի գա. գուցե գունատ մի ստվեր Լուռ ներս սողա ու նորից լուռ չքանա:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Մխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ուտել, լինել, գնալ, դառնալ*** բայերի անցյալ կատարյալը, վաղակատարը, հրամայականը կազմվում են արմատի փոփոխությամբ:
2. Ածանցավոր բայեր են այն բայերը, որոնց կազմում կա որևէ (բայական կամ այլ) ածանց:
3. ***Ն, չ*** սոսկածանց ունեցող բոլոր բայերը չեզոք սեռի են:
4. ***Վ*** ածանց ունեցող բայերը ոչ միշտ են կրավորական սեռի:
5. Որոշ բայերի հարակատար կամ ենթակայական դերբայները դարձել են գոյականներ:
6. ***Գալ, տալ, լալ*** բայերը համակատար դերբայ են կազմում կանոնավոր բայերից տարբեր ձևով: